



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ դասվար

Թեմա՝ Գրական ստեղծագործության շուրջ տարվող աշխատանքը  
տարրական դպրոցում

Կատարող՝ Ալեքսանյան Գայանե Ռաֆիկի

Ղեկավար՝ Գյուլամիրյան Զուլիետա Հարությունի, մ. գ. դ. պրոֆեսոր

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3-4
1. ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԳՐԱՎԱԿԱՆ.....	5-7
2.3 ԸՆԹԵՐՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒՄԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ .....	8-11
2.4 ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ ՏԱՐԿՈՂ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԱՇԽԱՏԱՆՔ .....	12-16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ.....	18

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցում գիտելիքների ձեռքբերումը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այս հիմնավորմամբ էլ պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի ձեռքբերումը, այլ դրանց՝ կրտսեր դպրոցականների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրագույն մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Սա նշանակում է, որ տարրական ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները պիտի համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին, նրանց ճանաչողական հետաքրքրություններին, ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին: [1,4,5]

Մեր երկարամյա աշխատանքային փորձը, դասալսումները ցույց են տալիս, որ մենք ուսուցիչներս դասի ընթացքում ավելի մեծ տեղ են հատկացնում զրույցներին, երկխոսություններին, բառային աշխատանքին՝ անհրաժեշտ չափով ուշադրություն չդարձնելով բնագրի շուրջ տարվող աշխատանքներին, մասնավորապես՝ բնագրի հուզական կողմի վերլուծությանը: Արդյունքում՝ անհրաժեշտ մակարդակով չեն լուծվում դաստիարակչական խնդիրները: Այնինչ, հայտնի է, որ կրտսեր դպրոցն անձի զարգացման ամենաբարենպաստ ժամանակահատվածն է, և բաց թողնել ուսուցման այդ օղակի հնարավորությունը, նշանակում է լուրջ վնաս հասցնել սովորողների կրթադաստիարակչական գործընթացին:

Մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է կրտսեր դպրոցի մայրենիի դասերի առջև դրված զարգացնող խնդիրներով, կարդալու նկատմամբ դպրոցականների հետաքրքրության անկումով և ՀՀ նոր կրթակարգում [4,5] այդ ուղղությամբ առաջադրված օրախնդիր պահանջներով:

Հետազոտության նպատակն է բացահայտել II-IV դասարաններում գեղարվեստական բնագրի շուրջ տարվող աշխատանքի բնույթը, աշակերտների գործունեությունն այդ ընթացքում և ներկայացնել մեթոդական վերլուծություններ և ցուցումներ: Նպատակին հասնելու անհրաժեշտ է եղել լուծել հետևյալ խնդիրները.

- դասալսումներ իրականացնել կրտսեր դպրոցի 2-4-րդ դասարաններում՝ պարզելու համար մայրենիի դասերին կարդացած բնագրի շուրջ աշխատանքների ընթացքը.
- մշակել կարդացած բնագիրը հասկանալու, դրա շուրջ մտածելու և վերլուծելու աշակերտների կարողության ձևավորման մեթոդական շղթա:

## Կարդալու տարրական կարողության ձևավորումը որպես հասկանալով կարդալու գրավական

Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: Ուսուցման այբբենական շրջանում ձևավորվում են երեխաների կարդալու նախնական կարողությունները: Նրանք կարողանում են կարդալ փոքրիկ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենն աշակերտներին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասին: Կարդալու կարողությունների մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը:

Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, ուշադրություն, հիշողություն, կամք, զգացմունք):

«Առաջին դասարանցին, ուշադրությունը բևեռելով կարդալու գործընթացի մեխանիկական կողմին, ոչ միշտ է հասկանում իր կարդացածը, այդ պատճառով էլ նա մի քանի անգամ կրկնում է վանկերը կամ բառերը: Հաճախ աշակերտները առանձին բառեր ոչ թե կարդում են, այլ ձգտում են գուշակել՝ կարդալով միայն դրանց առաջին վանկը: Երեխայի կարդալու հմտության ձևավորման հետ այս երևույթներն աստիճանաբար անհետանում են», - նշում է Ջ. Գյուլամիրյանը: [1, էջ 22]

Կարդալու կարողության մշակման առաջին փուլի գերխնդիրը այնպիսի ընթերցողի ձևավորումն է, որը կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկատվությունը հասկանում է և իմաստավորում:

Կարդալն ունի մի շարք որակական հատկանիշներ, որոնք իրար հետ սերտորեն կապված ու փոխադարձաբար պայմանավորված են: Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը: Լավ կարդալու որակներն են՝

- ճիշտ կամ անսխալ կարդալ,

- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ:

Չասկանալով կարդալու կարողության մշակումը տարրական դպրոցի ընթերցանության դասի գերխնդիրն է. կարդալու ուսուցումը տարրական դպրոցի նպատակներից է, որը ուսուցման հետագա օղակներում դառնում է գիտելիքների ձեռքբերման միջոց:

Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու համար պրակտիկայում գործածվում են բազմաթիվ հնարներ: Մասնավորապես արդյունավետ է հատված առ հատված կարդալը և մեկնաբանելը զույգերով /իրար կողքի նստած/ կարդացածի բովանդակության շուրջ զրուցելը, իրար պատմելն ու դատողություններ անելը և այլն:

Մեր աշխատանքի ժամանակ աշակերտներին կարդալ հանձնարարելուց առաջ բնագրի վերաբերյալ որոշակի առաջադրանքներ ենք տալիս, ընտրովի ընթերցանության տարաբնույթ ձևեր կիրառում. հատվածաբար կարդալ ու այդ հատվածի հիմնական բովանդակության վերլուծություն և այլն: Չասկանալով կարդալու ուղղությամբ իրականացնում ենք համակարգված աշխատանք՝ օգտագործելով բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի ընձեռած հնարավորությունները:

Մեր կարծիքով, ընթերցանությունը նպատակային է և գիտակցական, երբ կարդալիս աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է իրենք կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսք գնալու:

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված ստեղծագործությունների դասարանական ընթերցումը մենք իրականացնում ենք մեր և աշակերտների կողմից: Մենք բազմիցս հանդգնել ենք, որ ստեղծագործության դասարանական ընթերցումը կարևոր դեր ունի աշակերտի՝ լավ կարդալու կարողության զարգացման և կատարելագործման, ինչպես նաև բովանդակության ճիշտ ընկալման առումով:

Այսպիսով, լավ կարդալ, նշանակում է կարդալ ճիշտ, հասկանալով, սահուն և արտահայտիչ:

Նշենք, որ լավ կարդալու հմտությունը միանգամից չի ձևավորվում: Այն իրականանում է քայլ առ քայլ, և յուրաքանչյուր քայլ ապահովում է հաջորդի ամրությունն ու ամբողջականությունը:

Լավ կարդալ սովորեցնելու համար աշակերտները պետք է`

1. կարդացած ստեղծագործության յուրաքանչյուր միտքը, դեպքը կարողանան վերլուծել սեփական տեսանկյունով,
2. բացահայտել և մեկնաբանել բնագրի յուրաքանչյուր բառի, արտահայտության իմաստը և հիմնական միտքը` գաղափարը,
3. որոշել ծագած խնդիրների լուծումները, ըմբռնել դրանց տրամաբանությունը, հիմնավորումները, երևույթների կապերն ու հետևանքները,
4. ընթերցանությունից ձեռք բերած տեղեկատվությունը համեմատել իր իմացածի, ճանաչածի, տեսածի, զգացածի հետ, կարդացածը վերարտադրել` հասկանալով և սեփական մեկնաբանություններով:

## Ընթերցած ստեղծագործության վերարտադրումը հասկանալով կարդալու կարողության ձևավորման գործում

Կարդացած ստեղծագործությունը վերարտադրելու՝ պատմելու կարողության ձևավորումը, հրապարակախոսային ունակության զարգացումը, խոսքաշեն լինելու ուղղությամբ տարվող աշխատանքներն ընթանում են դեռևս վաղ մանկության տարիներին ոչ միայն խոսքային համապատասխան միջավայրի, այլև հատուկ ծրագրավորված աշխատանքի շնորհիվ:

Կարևորում ենք նշել՝ քանի որ խոսքը մարդու մտածողության, զգացմունքների անմիջական ներկայացնողն է, ուստի աշխատել մարդու խոսքի զարգացման ուղղությամբ, նշանակում է առաջին հերթին զարգացնել նրա մտածողությունը, ընդարձակել զգացմունքների ներկայակերպ և ստեղծել խոսքային լեզվով դրանք արտահայտելու, ներկայացնելու հնարավորություն:

Հայտնի է, որ մարդը կխոսի, եթե միայն ասելիք ունենա, իսկ ասելիք ունենալու համար նա պիտի ունենա հարուստ կենսափորձ, զգացմունքներ, ընդարձակ մտահորիզոն:

Կրտսեր դպրոցական տարիքում է երեխան սկսում կարդալ, այդ ճանապարհով ևս ուսումնասիրել իրեն շրջապատող աշխարհը, հայտնաբերել անծանոթը, զարմանալին, վերլուծել դրանք, անցկացնել իր ներաշխարհով, փորձել մտածել դրանց մասին(ձևավորվում է ներքին խոսքը) և իր տեսակետը ներկայացնել բանավոր կամ գրավոր խոսքով (արտաքին խոսք):

Հասկանալով պատմելու կարողության զարգացմանը միտված ցանկացած ուսումնական գործունեություն իր մեջ ներառում է.

- հաղորդակցման գործընթացի նախապատրաստություն (մտքերի հավաքում՝ նախագծում),
- դրան համապատասխան խոսքային գործունեություն,
- վարած հաղորդակցական գործընթացի արդյունքները վերլուծելու և գնահատելու ունակություն:



Թեև պատմելու կարողությունները կրտսեր դպրոցում առավելագույնս ձևավորվում է բանավոր գործունեության ընթացքում, սակայն դրա ձևավորմանը նպաստում են նաև գրավոր վարժությունները, որոնք տալիս են ավելի շատ սովորեցնելու և սովորածը ստուգելու հնարավորություն:

Մենք մեր աշխատանքում գործածում ենք հետևյալ բնույթի առաջադրանքները.

- խմբավորել տեքստը, բացատրել թույլ տված սխալները,
- հայտարարության տեքստ կազմել(որևէ առիթի շուրջ), օրինակ՝ կորած շան մասին ,
- ըստ վերնագրի և հենակետային բառերի ու բառակապակցությունների տեքստ հյուսել,
- որոշել տրված բնագրի թեման և հիմնական միտքը,
- տրված բնագիրը բաժանել ըստ առանձին միկրոթեմաների և վերնագրել դրանցից յուրաքանչյուրը,
- երկխոսության մեջ մտնել բնագրի հերոսի հետ և գրի առնել սեփական խոսքը,
- երկխոսությունը գրի առնել որպես ականատես և այլն:

Դիտարկենք «Մայրենի 3» դասգրքում զետեղված ստեղծագործությունների շուրջ խոսելու ցանկություն, մղում, կարիք առաջացնող այնպիսի թեմաների շուրջ հարցադրումներ, առաջադրանքներ, որոնք աշակերտներին ընձեռում են ազատ մտածելու, ինքնուրույն խոսք կառուցելու, իրար չկրկնելու, համադասարանցիների հետ բանավեճի մեջ մտնելու լայն հնարավորություն: [3, էջ 33]

- Ներկայացրե՛ք, թե ինչպես պետք է պահել բնության գրկում և հիմնավորե՛ք ձեր կարծիքը:
- Հիշե՛ք և պատմե՛ք ուշագրավ դեպքեր կենդանիների կյանքից: (Եզոպոս, «ճամփորդները»)
- Փորձե՛ք ներկայացնել, թե ինչ կենդանիներ կարելի է պահել տանը, և ինչպես պետք է խնամել նրանց: (Հ. Սևան, «Աղվեսն ու վագրը»)
- Եկե՛ք քննարկենք, թե կարելի՞ է արդյոք բնակարանում կենդանի պահել: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: (նույն տեղում)
- Ի՞նչ արժեք ունի մարդու կյանքում ջուրը, և ի՞նչ է նշանակում խնայել այն: (Եր. Պետրոսյան, «Վարդավառ»)

- Ինչպե՞ս պետք է վարվել մեր կրտսեր բարեկամների՝ կենդանիների հետ: (Վ. Անանյան, «Որսորդի սիրտը»)
- Ի՞նչ է նշանակում «Շունը մեր հավատարիմ բարեկամն է» նախադասությունը:
- Ի՞նչ պետք է անել, երբ տանը հրդեհ է բռնվել:
- Ի՞նչ է նշանակում լինել հայրենասեր(Պ. Խաչատրյան, «Նամակ»)
- Ինչպե՞ս կարելի է պահպանել դպրոցական գույքը:
- Ինչու՞ է կարևոր մաքրասիրությունը:
- Ինչի՞ կարող է հանգեցնել ծուլությունը:
- Ի՞նչ կլինեք, եթե բոլորը ծուլ լինեին: (Կ. Եղիազարյան, «Լվացվել չցանկացող ծաղիկը»)
- Ի՞նչ պարտականություններ և իրավունքներ ունի աշակերտը:

Առաջադրվող հարցերից յուրաքանչյուրի շուրջ կարող են արտահայտվել բազմաթիվ աշակերտներ: Յուրաքանչյուրը խոսում է իր կենսափորձից վերցրած դեպքի շուրջ, մտածում ինքնուրույն, ներկայացնում չկրկնվող մտքեր, բանավիճում ընկերների հետ՝ փորձելով նրանց ապացուցել իր ճշմարտացի լինելը, սովորում պահպանել հրապարակախոսության վարքագծի կանոնները: Եվ քանի որ խոսակցության մեջ ներգրավվում են շատ երեխաներ, մեծանում է հետաքրքրությունն ուսումնասիրվող թեմայի շուրջ, դասարանում ստեղծվում դրական զգացմունքային դաշտ, առաջանում խոսելու ցանկություն և ամենակարևորը՝ վստահություն միջավայրի նկատմամբ. ձևավորվում է այն համոզմունքը, որ իր կարծիքը կարևոր է, և բոլորը լսում ու հարգում են այն:

Այս խնդիրները չափազանց էական են դպրոցականների խոսքի մշակույթի զարգացման գործընթացում. ազատ, անկաշկանդ խոսելու ամենաբարենպաստ պայմանը վստահությունն է քեզ ունկնդրող միջավայրի նկատմամբ: Նշանակում է խոսքային ակտիվ գործունեության ծավալման գլխավոր պայմանը դասարանում տիրապետող առողջ, անկաշկանդ, ջերմ մթնոլորտի առկայությունն է:

Որպեսզի դրվեն աշակերտի՝ խոսք կառուցելու կարողության հիմքերը, պիտի սկսել մայրենիի դասերին ընթերցվող (կամ արտադասարանային ընթերցանության համար հանձնարարված) ստեղծագործությունները վերլուծելու ունակության ձևավորումից:

Բնագրի շուրջ աշխատել, նշանակում է կարողանալ.

- որոշել կարդացած նյութի թեման և հիմնական միտքը,
- առանձնացնել գլխավորը,
- որոշել այն հիմնական մտքերը, որոնք օգնում են հասկանալ բնագրի միտքը (վերնագիրը, առաջին և վերջին նախադասությունները, հենակետային բառերը),
- կողմնորոշվել բնագրի մեջ, այն բաժանել տրամաբանական ամբողջություն կազմող ենթաթեմաների,
- բնագիրը վերարտադրել տարբեր աստիճանի մանրամասնություններով:

## Դիդակտիկ խաղը որպես բնագրի շուրջ տարվող հետաքրքրաշարժ աշխատանք

Այսօր կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն չափազանց հետաքրքիր ու զարգացնող խաղալիքներ, խաղում են բազմաշերտ մտավոր գործունեություն պահանջող խաղեր, էլ չենք խոսում համակարգչի ու համացանցի ընձեռած հնարավորությունների մասին:

Ավագ և կրտսեր դպրոցական տարիքի բոլոր երեխաներն էլ ուզում են խաղալ. չմոռանանք, որ այսօր չորրորդ դասարանում «հայտնված» տղաներն ու աղջիկները դեռևս 9-9.5 տարեկան են, և որքան էլ որ մեզ համոզի արտելերացիա կոչվող երևույթը, թե այսօրվա սերունդը ավելի հասունացած է, միևնույնն է՝ կան կազմաբնախոսական որոշակի առանձնահատկություններ, որոնք հեզմելն անթույլատրելի է: Վերջապես այս երեխաների տարեկիցները տարիներ առաջ սովորում էին երկրորդ դասարանում:

Հայտնի, որ երեխայի զարգացման ցուցանիշներից մեկը ճանաչողական ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողությունն է: Այն նպաստում է ապագայում ցանկացած իրավիճակներում առանց դժվարությունների կողմնորոշվելուն՝ ձեռքբերածը փոփոխվող պայմաններում, ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելուն:

Երեխաների խաղային գործունեության անհրաժեշտության մասին գրել են բազմաթիվ մանկավարժեր, հոգեբաններ: Նրանք բոլորն էլ համարում են, որ խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Գաղտնիք չէ, որ երեխան խաղերի միջոցով կրկնում է մեծերի գործունեությունը և խաղալով իր վրա է վերցնում նրանց սոցիալական դերը՝ այն ներկայացնելով խաղային գործողություններով: Ժ. Ժ. Ռուսսոն կարծում էր, որ երեխան «Պարապում է, թե զվարճանում, նրա համար հավասարաբեք գործունեություն է. նրա խաղերը նրա պարապմունքն են, նա չի զգում պարապմունքի և խաղի տարբերությունը»: [1]

Խաղը ցանկացած ուսումնական նյութի յուրացման գործընթաց դարձնում է հետաքրքրաշարժ, երեխայի գործունեությունը՝ գրավիչ, ստեղծում աշխատանքային տրամադրություն, թեթևացնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Ներկայացնենք մեր կողմից իրականացվող՝ կրտսեր դպրոցականների կարդալու կարողության ձևավորմանը նպաստող խաղերի համակարգ: [2]

### *ՎԱՆԿԵՐԻՑ ԲԱՌԵՐ ՍՏԱՆԱԼՔ*

**Խաղի նպատակը.** ամրակայել վանկերից բառեր կազմելու և դրանք կարդալու երեխաների կարողությունները, մշակել զույգերով աշխատելու, համագործակցային կարողություններ:

**Խաղի ընթացքը:** Մեկական ծրար դրվում է յուրաքանչյուր նստարանի վրա:

**Առաջադրանք:** Ծրարի մեջ գտնվող վանկերով կազմել բառեր և կարդալ: Հաղթում է այն զույգը, որը արագ կկազմի բառերը և ճիշտ կկարդա:

Աշխատանքը շուտ ավարտած զույգերը լուռ ձեռք են բարձրացնում, սակայն բառերի ընթերցումը սկսվում է միայն այն ժամանակ, երբ բոլոր երեխաները վերջացրել են այդ բառակազմական աշխատանքը:

Երեխաները հաջորդաբար սկսում են կարդալ բառերը և ստանում են խրախուսական բարենիշներ:

Կազմակերպել 1-2 անգամ:

### *ԱՎԱՐՏԻՐ ԲԱՌԵՐԸ*

**Խաղի նպատակը.** երեխաներին նախապատրաստել վանկի մասին նոր գիտելիքների ձեռքբերմանը, սովորեցնել բառը վանկատել:

**Անհրաժեշտ պարագաներ.** բազմավանկ անուններ ունեցող առարկայական նկարներ և խաղալիքներ:

**Խաղի ընթացքը:** Ուսուցիչ - Ես հիմա կասեմ ձեզ ծանոթ անունների առաջին վանկը, դուք պետք է ավարտեք բառը՝ ավելացնելով մեկ վանկ: Ուսուցիչը արտասանում է **թ** վանկը, երեխաներն ավելացնում են վանկեր՝ ստանալով **Թամար, Թաթուլ, Թալին, Թաթիկ** և այլ բառեր: Այս խաղը կարելի է կազմակերպել նաև այլ բառերի շուրջ:

Նույնը կարելի է կազմակերպել բազմավանկ բառերի շուրջ՝ օգտագործելով առարկայական նկարներ, խաղալիքներ, առարկաներ:

Կազմակերպել 3-4 անգամ:

### *ԲԱՌԱՇՂԹԱ*

**Խաղի նպատակները.** զարգացնել երեխաների հնչյունային լսողությունը, բառը վերլուծելու կարողությունը, հարստացնել նրանց բառապաշարը, ձևավորել համեմատելու, հակադրելու, համադրելու երեխաների կարողությունները:

**Անհրաժեշտ պարագաներ.** տարբեր առարկաների փոքրիկ նկարներ:

**Խաղի ընթացքը:** Դասարանը բաժանվում է խմբի, կամ խումբ են ստեղծում յուրաքանչյուր նստարանին նստած երկու աշակերտները: Յուրաքանչյուր խմբի առջև լցվում են առարկայական տարաբնույթ նկարներ: Երեխաները պետք է ընտրեն և իրար կողքի հաջորդաբար դասավորեն նկարներն այնպես, որ մի նկարում պատկերված առարկայի անվան վերջին տառով սկսվի հաջորդ նկարում պատկերված առարկայի անունը:

Կազմակերպել 2-3 անգամ:

### *ԳՏԻՐ ՍԽԱԼԸ*

**Խաղի նպատակները.** երեխաներին սովորեցնել տարբերել հնչյուններերը (ծայնավոր, բաղաձայն), զարգացնել բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու նրանց կարողությունը, ձևավորել բառի վանկահնչյունային կառուցվածքը գծապատկերի միջոցով ճանաչելու ունակությունը, զարգացնել երեխաների ուշիմությունը:

**Անհրաժեշտ պարագաներ.** առարկայական նկարներ, որոնց հետևում մատիտով գծված են նկարներում պատկերված առարկաների անվանումների հնչյունային գծապատկերները: Գծապատկերներից մի քանիսը սխալ է գծված:

**Խաղի ընթացքը:** Դիտել նկարներում պատկերված առարկաները, որոշել դրանց համապատասխան գծապատկերները, գտնել սխալ գծապատկերները և շտկել դրանք:

Կազմակերպել 2-3 անգամ:

### *ԿՏՐՏՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ*

**Խաղի նպատակները.** ամրակայել նախադասություն կազմելու ուղղությամբ երեխաների կարողությունները, գտակցե տալ նախադասության սահմանումը:

**Անհրաժեշտ պարագաներ.** կտրտված նախադասություններով լի ծրարներ՝ յուրաքանչյուր խմբին մեկ ծրար: Ընդամեն 5-6 ծրար:

**Խաղի ընթացքը:** 1–6 հաշվով դասարանը բաժանվում է 6 խմբի: Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկական ծրար, որոնց մեջ լցված են 2–3 մասի բաժանված նախադասություններ:

Ուսուցիչը հանձնարարում է ամբողջացնել նախադասությունները և դասավորել այնպիսի հաջորդականությամբ, որ ստացվի ամփոփ միտք: Երեխաները խմբերով աշխատում են, ամբողջացնում նախադասությունները: Այնուհետև յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի կազմածը:

Կազմակերպել 2-3 անգամ:

### *ԱՄՔՈՂՋԱՅՐՈՒ ԲԱՌԸ*

**Խաղի նպատակները.** սովորեցնել բառերը ճիշտ վանկերի բաժանել: Ջարգացնել երեխաների բառապաշարը: Դաստիարակել ուշիմություն, մտքի սրություն: Մշակել վերլուծելու և համադրելու կարողություններ:

**Խաղի ընթացքը.** ուսուցչուհին վանկատելով ասում է երեխաներին ծանոթ բառերի առաջին վանկը (վանկերը), երեխաները պետք է ամբողջացնեն բառերը:

Օրինակ՝ նա–պաս– ....., օ–դա– ..., խընդ– ..., ձըկ– ... և այլն:

Կազմակերպել 2-3 անգամ:

### *ՖԻՇԵՆՔ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ*

**Խաղի նպատակները.** զարգացնել չափածո խոսքն արձակի վերածելու, անգիր անելու, կապակցված խոսք կառուցելու երեխաների կարողությունները, հարստացնել սովորողների բառապաշարը, նպաստել դասի ժամանակ ուսումնասիրվող ստեղծագործության բառապաշարը հասկանալով յուրացնելուն:

**Անհրաժեշտ պարագաներ.** գրելու թուղթ, գրիչներ

**Խաղի ընթացքը:** Դասարանը բաժանել 4-6 խմբի, յուրաքանչյուր խմբի բաժանել գրելու թղթեր, գրիչներ և տալ հանձնարարություն. «Գրե՛ք ձեր իմացած բանաստեղծություններից հատվածներ»:

Խմբերը հերթով միմյանց առաջարկում են տարբեր բանաստեղծություններից հատվածներ: Հակառակորդ թիմը պարտավոր է որոշակի ժամանակահատվածում գրել չափածո ստեղծագործության հատվածի շարունակությունը:

**Երկրորդ տարբերակ.** Խաղն սկսվում է նույն ձևով, սակայն այս դեպքում խմբերը ոչ թե ամբողջացնում են միմյանց ներկայացրած բանաստեղծությունը, այլ այն վերարտադրում են արձակ շարադրանքով:

Կազմակերպել 2-3 անգամ:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կարողալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, ուշադրություն, հիշողություն, կամք, զգացմունք): Ճանաչողության տեսությունների համաձայն՝ մարդու մտավոր կարողության մակարդակը որոշվում է նաև իր իր ձեռք բերած տեղեկատվությունը իմաստավորելու և կիրառելու ունակություններով:
- Բնագրի վրա տարվող աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, կենսափորձով, այնպես էլ ուսուցչի՝ նախապես մշակած հարցերով, իրականացրած երկխոսություններով, կարդացած ստեղծագործության բանալի մտքերի բացահայտման ձևերով, հենակետային բառերի ճիշտ ընտրությամբ: Այս երկու կարևոր բաղադրիչների առկայությունը կարող է խթանել, որ աշակերտը, կարդացած նյութն իր կենսափորձով իմաստավորելով, հասկանա, ընկալի, յուրացնի և դարձնի իրենը:
- Ընթերցած ստեղծագործության շուրջ կոլեկտիվ աշխատանք կատարելուն (կարդալ շարունակելով, ընտրովի, դերերով և այլն) նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը: Այն ոչ միայն միավորում է տվյալ դասարանի բոլոր աշակերտների ուշադրությունը, այլև ուղղորդում է ողջ դասարանին՝ կարդալ մտքում (աչքերով)՝ հայացքով հետևելով ընկերների ընթերցանությանը և իմաստավորելով կարդացածը: Տարրական դպրոցում բարձրաձայն ընթերցանության դեպքում ընթերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև՝ ականջները. որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին, այնքան այդ գործընթացն արդյունավետ կլինի:
- Թեև պատմելու կարողությունները կրտսեր դպրոցում առավելագույնս ձևավորվում է բանավոր գործունեության ընթացքում, սակայն դրա ձևավորմանը նպաստում են նաև գրավոր վարժությունները, որոնք տալիս են ավելի շատ սովորեցնելու և սովորածը ստուգելու հնարավորություն:
- Երեխայի զարգացման ցուցանիշներից մեկը ճանաչողական ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողությունն է: Այն նպաստում է ապագայում ցանկացած իրավիճակներում առանց դժվարությունների կողմնորոշվելուն՝ ձեռքբերածը փոփոխվող պայմաններում, ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելուն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., Ջանգակ-97, 2009, - 349 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Ջ., Խաղալով սովորենք, Ջանգակ-97, Եր., 2009, - 79 էջ:
3. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն.Յ., «Մայրենի 3», -Եր., Էդիթ Պրինտ, 2011, - 159 էջ:
4. Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: -Եր., Անտարես, 2006, - 146 էջ:
5. Հանրակրթության պետական կրթակարգ , Եր., Անտարես, 2004թ.,- 72 էջ: